ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*ԽՍ-158-24.05.2019-ՊԻ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

No.	*Առաջարկության հեղինակը*	*Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	… առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:»:	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն	Ընդունվել է

2.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	… առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ սնանկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:»:	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն	Ընդունվել է